



ԾՈՎԻՆԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

ՍԱՍՈՒՆ ՄԻՆԱՅԱՆ

ՀՊՏՀ «Տնտեսության կարգավորում և միջազգային տնտեսական հարաբերություններ» ֆակուլտետի «Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում» մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿՐԱ ԱԶԴՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ: ԷԿԶՈԳԵՆ ԱՃԻ ՄՈԴԵԼ

Տնտեսական աճի ապահովումը յուրաքանչյուր երկրի համար տնտեսական և քաղաքական նպատակ է: Ցանկացած երկրի տնտեսական համակարգ միշտ էլ ենթարկվում է արտաքին և ներքին գործոնների ազդեցությանը: Տնտեսական աճի վրա ազդող գործոնների, դրանց ներգործությունների մասին ունեցած պատկերացումները և գիտելիքները հնարավորություն են տալիս ստեղծելու առավել կայուն հիմքեր տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման համար: Համաշխարհային տնտեսության զարգացմանը զուգընթաց մեծանում է մեր երկրի կախվածությունը արտաքին աշխարհից, կարևորվում է տնտեսական աճի նոր աղբյուրների բացահայտումը, ուստի հրատապ է դառնում բոլոր այն արտաքին գործոնների և ազդակների պարզումը, որոնք էականորեն ազդում են տնտեսական աճի վրա: Արտաքին գործոնների խթանմամբ և շրջանակների ընդլայնմամբ տնտեսական աճի ապահովման անհրաժեշտությունը հրատապ է դարձնում նաև դրանց ազդեցության հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որով էլ պայմանավորված է սույն հոդվածի արդիականությունը:

Հիմնաբառեր. տնտեսական աճ, արտաքին գործոն, տնտեսական աճի մոդել, Սոլոուի տնտեսական աճի մոդել, տնտեսական աճի խթանում, էկզոգեն աճի մոդել, համաշխարհային տնտեսություն, արտաքին առևտուր, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ինստիտուտներ, ինստիտուցիոնալ փոփոխություններ

JEL: E6, E50, E60

Տնտեսական աճը և դրա վրա ազդող գործոնները մշտապես գտնվել են տնտեսագետների ուշադրության կենտրոնում, քանի որ տնտեսական աճը, վերջիվերջո, փոխկապված է տնտեսական բոլոր երևույթների հետ: Այս փոխկապվածությունը արտահայտվում է նրանով, որ վերջիններիս նպատակը, լայն իմաստով, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումն է: Ուստի տնտեսական աճը, որպես հասարակական վերարտադրության ընդլայնման և բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևոր նախապայման, դիտարկվում է որպես յուրաքանչյուր պետության տնտեսական քաղաքականության ռազմավարական նպատակ:

Անընդհատ աճ գրանցող տնտեսությունն ի վիճակի է բավարարելու նոր ձևավորվող պահանջունքները և լուծելու սոցիալ-տնտեսական հիմնահարցերը ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Իրական եկամուտների աճը ընդլայնում է մարդկանց՝ ապրանքներից և ծառայություններից օգտվելու հնարավորությունները, ինչպես նաև սպառման մակարդակը:


Համաշխարհային տնտեսության շարժունությունը, տնտեսական տատանումների հաճախացումը, ճգնաժամային սպասումները տարեցտարի ավելի են դժվարացնում տնտեսական քաղաքականության արդյունավետ միջոցառումների իրականացման գործընթացի բնույթը: Համաշխարհային տնտեսությունում վերափոխումները ձևակերպում են աշխարհի երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման օրակարգը՝ պահանջելով փոփոխվող պայմաններում երկրի կարողությունների և հնարավորությունների հստակ գնահատում, ռեսուրսների նպատակային արդյունավետ օգտագործում ու արդյունքին կողմնորոշված կառավարում, արտաքին գործոնների բացահայտում և խթանում, դրանց ազդեցության գնահատում տնտեսական աճի վրա և այլն:

Թեև Հայաստանի տնտեսությունն անկախությունից ի վեր բավական փոփոխություններ է կրել, այն ներկայումս կանգնած է հիմնովին վերափոխման բարդ մարտահրավերների առջև: ՀՀ-ում իրականացված տնտեսական քաղաքականության գործադրման արդյունքում դեռևս չեն հաղթահարվել արդեն երկու տասնամյակի վերափոխումային գործընթացներին հատուկ այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են բնակչության ցածր կենսամակարդակը, եկամուտների բևեռացումը, ստվերային տնտեսության մեծացումը, գործազրկությունը, մենաշնորհը, կոռուպցիոն ռիսկերը, բնակչության միգրացիան և այլն: Այս խնդիրներն ավելի բարդացան 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, որի հետևանքով 2009 թ. ՀՀ տնտեսական աճը՝ դոլարային արտահայտությամբ, նվազեց 14.1%-ով¹, իսկ համաշխարհային տնտեսության աճը՝ 1.7%-ով:

Հայաստանի և համաշխարհային տնտեսական աճի տեմպերը 2008–2018 թթ. ներկայացված են գծապատկերում².


¹ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2010, Եր., ՀՀ ՎԿ, 2010, էջ 233. <https://www.armstat.am/file/doc/99461748.pdf>

² Գծապատկերը կազմել են հեղինակները Համաշխարհային բանկի և ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա: <http://pubdocs.worldbank.org/en/947541524671445038/mpo-arm.pdf>



Գծապատկեր 1. ՀՀ և համաշխարհային տնտեսական աճի տեմպերը 2008–2018 թթ.՝ նախորդ տարիների նկատմամբ (%)

Ճգնաժամը մեկ անգամ ևս ցույց տվեց Հայաստանի՝ համաշխարհային տնտեսությունից անխուսափելի կախվածությունը (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Տնտեսական աճի գործոնների դասակարգումը

Տնտեսական աճի վերաբերյալ ստեղծվել են բազմաթիվ տեսություններ, որոնց հիմնահարցը աշխարհի երկրների տնտեսական զարգացման և բնակչության եկամուտների տարբերության պատճառների բացահայտումն է: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տնտեսական աճի և դրա վրա ազդող գործոնների նկատմամբ տնտեսագետների հետաքրքրությունը մեծացավ, ինչը նպաստեց տնտեսական աճը տարբեր տեսանկյուններից քննարկող բազմազան տեսությունների ու մոդելների մշակմանը: Տնտեսական աճի տեսություններից հատուկ ուշադրություն է գրավում Սոլոուի տնտե-

սական աճի մոդելը, որը նորդասական աճի մոդելի վառ օրինակ է: Դա մշակել են ամերիկացի ականավոր տնտեսագետ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռոբերտ Սոլոուն և ավստրալիացի տնտեսագետ Թրևոր Սվենը 1956 թ. լույս տեսած «Ներդրում տնտեսական աճի տեսության մեջ»³ աշխատությունում: Ըստ Սոլուի մոդելի՝ միակ ճանապարհը, որը կապահովի անընդմեջ աճող կենսամակարդակ կամ արագ տնտեսական աճ, տեխնոլոգիական առաջադիմությունն է⁴: Այնուհետև Սոլոուն (1956) տվեց մոդելի երկու կարևոր ենթադրությունները.⁵

1. Ջարգացող շուկայական տնտեսություններն ընդունակ են աճելու ավելի արագ, քան զարգացած տնտեսությունները:
2. Տեխնոլոգիական առաջընթացը երկարաժամկետ տնտեսական աճի հիմնարար որոշիչն է:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ առաջադրվել են աճի բազմաթիվ մոդելներ, որոնց հիմնական ուղղվածությունը երկրում տնտեսական աճն ապահովող աղբյուրների բացահայտումն է և դրա վրա տարբեր արտաքին և ներքին գործոնների ազդեցության գնահատումը: Չնայած տնտեսական մոդելների բազմազանությանը, սույն աշխատանքի նպատակներից ելնելով, ուշադրության ենք առել նորագույն մոդելներից մեկը՝ աճի արտաժին կամ էկզոգեն մոդելը (Exogenous Growth Model), քանի որ, կարծում ենք, այս մոդելն ավելի նպատակահարմար է մեր թեմային՝ արտաքին գործոնների դիտարկման տեսանկյունից, չնայած կա նաև ներծին կամ էնդոգեն մոդել (Endogenous Growth Model), որը նույնպես կարևոր ենթադրություններ է ձևավորում: Աճի այս երկու մոդելները՝ էկզոգեն և էնդոգեն, նորդասական ժամանակակից մոդելներ են համարվում:

Բազմաթիվ տնտեսագետներ կարծում են, թե Սոլուի մոդելը, ըստ էության, էկզոգեն մոդել է, որում արտաքին գործոններ են տեխնոլոգիական առաջընթացը, բնակչության աճի տեմպը և խնայողության նորմը⁶: Ամերիկացի տնտեսագետ Լանտ Պրիտչետոն (2006) ասում է. «Սոլուի մոդելը չի ենթադրել, թե տեխնոլոգիական առաջընթացը արտաժին է, այն է՝ որոշված է մոդելից դուրս, անկախ: Ավելին, այն արեց ենթադրություններ, որոնք անհրաժեշտ էին դիմամիկ հավասարակշռությամբ տնտեսության մոդել մշակելու համար, բացեց ճանապարհ, որով երկարաժամկետում տնտեսությունը կհանդարտվի: Սակայն մոդելը պետք է տեխնոլոգիական առաջընթացը դիտարկեր որպես արտաքին գործոն»: Այնուամենայնիվ, Սոլուի մոդելի արտաժին լինելու տեսակետը դեռևս վիճելի է: Բեն Բերնանկին (2002) կարծում է, թե, Սոլուի մոդելի տեսանկյունից, տնտեսական աճը էկզոգեն չէ⁷:

Տնտեսական աճի մոդելները տարբերվում են ինչպես իրենց գնահատականներով, ենթադրություններով և առաջարկություններով, այնպես էլ

³ Տե՛ս **Solow R.M.**, A Contribution to the Theory of Economic Growth, The Quarterly Journal of Economics, Vol. 70, No. 1, 1956:

⁴ Տե՛ս **Donovan P.**, R.M. Solow - Why do some countries grow faster than others?, UBS, 2018, Nobel Perspectives, <https://www.ubs.com/microsites/nobel-perspectives/en/laureates/robert-solow.html>

⁵ Տե՛ս **Abel A.B., Bermanke B.S., Croushore D.**, Macroeconomics (9th Edition), 2017, ISBN 978-0-13-414153-4, էջ 230:

⁶ Տե՛ս **Ugur M.**, Modeling Growth: Exogenous, Endogenous and Schumpeterian growth models, University of Greenwich Business School, GPERC #37, February, 2016, էջ 4:

⁷ **Bermanke B.S., Gurkaynak R.S.**, Is Growth Exogenous? Taking Mankiw, Romer, and Weil seriously, Princeton University, էջ 29:

նրանով, թե ինչպես են դասակարգում տնտեսական աճի գործոնները: Գծապատկեր 2-ում ներկայացված է տնտեսական աճի վրա ազդող գործոնների ամփոփ դասակարգումը⁸, սակայն սույն աշխատության շրջանակներում շեշտը հիմնականում դրվել է արտաքին գործոնների վրա:

Տնտեսական աճը կրում է ոչ միայն տնտեսական, այլ նաև ոչ տնտեսական բնույթի գործոնների ներգործությունը: Հարկ է նշել, որ այս երկու խումբ գործոնները տնտեսական աճի վրա կարող են ունենալ և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն: Ելնելով սույն հոդվածի նպատակներից՝ առավել ուշադրության ենք առել *արտաքին գործոնները*, որոնցից կարելի է առանձնացնել արտաքին առևտուրը, օտարերկրյա ներդրումները, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ), աշխատուժի միջազգային միգրացիան, ազգային արժույթի փոխարժեքը, ինտեգրման գործընթացները, արտերկրից ստացվող դրամական փոխանցումները (տրանսֆերտները), փոխառվական կապիտալի հոսքերը և այլն:

Տնտեսական աճի էկզոգեն մոդելը, ըստ էության, արտաքին գործոններից բխող տնտեսական աճի մոդել է: Էկզոգեն մոդելին անդրադարձել են բազմաթիվ տնտեսագետներ, սակայն միշտ չէ, որ նրանք նախապատվություն են տվել մոդելին: Տնտեսագետներ Քինգը և Ռոբսոնը (1992) պնդում են, որ էկզոգեն աճի մոդելը չի տալիս որևէ վերլուծական գործիք, որով կառավարության քաղաքականությունը կազդի տնտեսական աճի վրա: Նրանք նշում են, որ «առանց տնտեսական աճի մոդելի, կառավարության քաղաքականությունը, լավագույն դեպքում, կմոլորվի, իսկ վատագույն դեպքում՝ կլինի անարդյունավետ»: Ռոմերի (1989) կարծիքով՝ «արտածին տեխնոլոգիական փոփոխություններով մոդելի դեպքում երբեք էլ նշանակություն չի ունեցել՝ ինչ է արել կառավարությունը»: Մենք նույնպես համամիտ ենք Ռոմերի կարծիքին, քանի որ տեխնոլոգիական առաջընթացը եթե, ըստ մոդելի, արտաքին գործոն է, ապա այն չի կարող կրել կառավարության քաղաքականության ազդեցությունը:

Էկզոգեն մոդելի մասին խոսել են բազմաթիվ աճի տեսաբաններ, և դեռևս 1960-ական թվականներից կատարվել են վերլուծություններ, բացահայտվել են նորանոր արտաքին գործոններ, տնտեսաչափական մոդելների օգնությամբ գնահատվել է այդ գործոնների ազդեցությունը իրական ՀՆԱ աճի կամ տնտեսական աճի վրա:

Ամենաթարմ վերլուծությունը, որ կատարվել է էկզոգեն մոդելի արդիականությունը ստուգելու նպատակով, իրականացվել է 2016 թվականին Ի. Շապիրովի կողմից⁹: Նա որոշել և վերլուծել է այն գործոնները, որոնք ազդել են ԵՄ Արևելյան գործընկերության (EU's Eastern Partnership) երկրների տնտեսական աճերի, ավելի որոշակի՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճի վրա՝ դիտարկվող ժամանակահատվածն ընդունելով 2000–2015 թվականները: Հայաստանի Հանրապետությունը, իհարկե, ԵՄ Արևելյան գործընկերության երկրների շարքում է, և, հետևաբար, այս ինտեգրմամբ պայմանավորված, տնտեսական աճի ապահովման տեսանկյունից կարևորվում է արտա-

⁸ Կազմել են հեղինակները՝ տնտեսական աճի տարբեր մոդելներում գործոնների դասակարգումներից ելնելով:

⁹ Տե՛ս **Shapiro I.**, Exogenous Vs Endogenous Growth In The EU's EaP and Central Asian Countries, *Scientific Annals of Economics and Business* 63 (SI), 2016, էջ 109–124. <https://www.degruyter.com/downloadpdf/j/saeb.2016.63.issue-s1/saeb-2016-0138/saeb-2016-0138.pdf>

քին գործոնների ազդեցության գնահատումը: Վերոնշյալ վերլուծության մեջ հեղինակը ներկայացրել է արտաքին և ներքին գործոնների իր դասակարգումը¹⁰, ըստ որի տնտեսական աճի արտաժին մոդելի արտաքին գործոններ են երկրի աշխարհագրական դիրքը, ինստիտուտները, ժողովրդագրական միտումները, սոցիալ-մշակութային և քաղաքական գործոնները, առևտրի բացությունը (արտահանումը), ՕՈՒՆ-ի ներհուսքը և այլն¹¹: Այդ գործոնների՝ տնտեսական աճի կամ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճի հետ կոռելյացիայի արդյունքները վերոնշյալ երկրներում (այդ թվում՝ ՀՀ-ում) արտացոլված են աղյուսակում.¹²

Աղյուսակ 1

ԵՄ Արևելյան գործընկերության երկրների տվյալների վերլուծության արդյունքները՝ կապված արտաքին և ներքին գործոնների հետ (դիտարկվող ժամանակաշրջանը՝ 2000-2015 թթ.)

			Կոռելյացիաներ					
			Հայաստան	Ադրբեջան	Բելառուս	Վրաստան	Մոլդովա	Ուկրաինա
Տնտեսական աճի որոշիչներ	Գործոններ / Ցուցիչներ	Գործակիցներ	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (մլն դոլար)	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (մլն դոլար)	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (մլն դոլար)	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (մլն դոլար)	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (մլն դոլար)	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (մլն դոլար)
Ֆիզիկական կապիտալի կուտակում	ՕՈՒՆ ներհուսք	Pearson Corr Sig. (2-tailed) N	0,184 0,513 15	-0,582 0,023 15	0,640 0,010 15	0,030 0,917 15	-0,133 0,636 15	0,319 0,246 15
	Համախառն հիմնական կապիտալի ձևավորում	Pearson Corr Sig. (2-tailed) N	0,439 0,102 15	-0,580 0,023 15	0,873 0,000 15	-0,433 0,107 15	0,497 0,059 15	-0,023 0,936 15
Մարդկային կապիտալ	Բարձրագույն կրթություն	Pearson Corr Sig. (2-tailed) N	0,748 0,001 15	-0,911 0,001 9	0,815 0,000 15	-0,550 0,034 15	0,577 0,031 14	0,622 0,013 15
	Բարձրագույն կրթություն, ընդամենը (%)	Pearson Corr Sig. (2-tailed) N	0,861 0,000 15	0,606 0,083 9	0,949 0,000 15	-0,590 0,021 15	0,873 0,000 14	0,915 0,000 15
Հետազոտություն և զարգացում (R&D)	Հետազոտության և զարգացման ծախսեր	Pearson Corr Sig. (2-tailed) N	0,135 0,646 14	-0,670 0,009 14	0,192 0,510 14	-0,799 0,017 8	0,253 0,453 11	-0,819 0,000 14
	Բարձր տեխնոլոգիաների արտահանում	Pearson Corr Sig. (2-tailed) N	0,580 0,023 15	0,594 0,020 15	0,920 0,000 15	-0,490 0,064 15	0,852 0,000 15	0,857 0,000 15

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 111:

¹¹ Մեզ հետաքրքրող գործոններն ընդգծված են աղյուսակում:

¹² Տե՛ս Shapirov I., նշվ. աշխ., էջ 123:

Տնտեսական քաղաքականություն և մակրոտնտեսական միջավայր	Գնաձ	Pearson Corr	0,348	-0,040	-0,386	-0,236	-0,614	0,063
		Sig. (2-tailed)	0,203	0,889	0,155	0,397	0,015	0,824
		N	15	15	15	15	15	15
Առևտրի բացություն	Արտահանում	Pearson Corr	-0,423	0,246	-0,083	0,802	-0,777	-0,835
		Sig. (2-tailed)	0,116	0,376	0,769	0,000	0,001	0,000
		N	15	15	15	15	15	15
Ժողովրդագրական միտումներ	Բնակչության աճ	Pearson Corr	0,688	0,620	0,855	-0,612	0,869	0,920
		Sig. (2-tailed)	0,005	0,014	0,000	0,015	0,000	0,000
		N	15	15	15	15	15	15
	Ակտիվ բնակչության մասնաբաժին	Pearson Corr	0,942	0,955	0,868	0,941	0,931	0,905
Sig. (2-tailed)		0,000	0,000	0,000	0,000	0,000	0,000	
		N	15	15	15	15	15	
Աշխարհագրական դիրք	Բնական ռեսուրսների վարձույթ	Pearson Corr	0,810	-0,351	-0,798	0,715	-0,215	0,524
		Sig. (2-tailed)	0,000	0,200	0,000	0,003	0,442	0,045
		N	15	15	15	15	15	
Ինստիտուտներ	Կառավարության արդյունավետություն	Pearson Corr	0,529	0,618	0,086	0,966	0,580	-0,087
		Sig. (2-tailed)	0,052	0,018	0,771	0,000	0,030	0,766
		N	14	14	14	14	14	14
	Օրենքի գերակայություն	Pearson Corr	0,262	0,533	0,774	0,959	0,742	0,551
Sig. (2-tailed)		0,365	0,050	0,001	0,000	0,002	0,041	
		N	14	14	14	14	14	
	Կոռուպցիայի վերահսկում	Pearson Corr	0,447	0,076	0,547	0,913	0,197	-0,076
		Sig. (2-tailed)	0,109	0,797	0,043	0,000	0,500	0,796
		N	14	14	14	14	14	
Քաղաքական գործունեություն և բռնության / ահաբեկչության բացակայություն		Pearson Corr	0,486	0,815	-0,365	0,791	0,538	0,063
		Sig. (2-tailed)	0,078	0,000	0,199	0,001	0,047	0,831
		N	14	14	14	14	14	

Նշումներ՝

Ուժեղ կոռելյացիա (r= 0,6-1)

Միջին կոռելյացիա (r= 0,4-0,6)

Թույլ/աննշան, կամ չկա կոռելյացիա (r= 0-0,4)

Ըստ աղյուսակ 1-ի արդյունքների՝ հեղինակը նկատեց էական և ուժեղ հարաբերակցություն կամ կոռելյացիա գրեթե բոլոր փոփոխականների հետ՝ բացառությամբ տնտեսական քաղաքականության և մակրոտնտեսական միջավայրի փոփոխականների (գնաձ): Մեզ հետաքրքրող արտաքին գործոնները, այս դեպքում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները և արտահանումը, ցույց են տվել հետևյալ արդյունքները. ՕՈՒՆ-ի ներհուսքը << տնտեսական աճի հետ ունի դրական, սակայն թույլ կոռելյացիա (0,184), իսկ արտահանումը՝ թույլ բացասական կոռելյացիա (-0,423): Օրինակ՝ համեմատության համար նշենք, որ Վրաստանում ՕՈՒՆ-տնտեսական աճ կոռելյացիան 0,030 է, սակայն արտահանման դեպքում բավականին ուժեղ է (0,802)՝ համեմատած Հայաստանի հետ:

Սույն աշխատանքի նպատակներից ելնելով՝ կարևորել ենք մաս ինստիտուցիոնալ ոլորտի արդյունքները Հայաստանի համար: Շապիրովը որպես ինստիտուցիոնալ գործոններ է դիտարկել կառավարության արդյունավետությունը, օրենքի գերակայությունը և կոռուպցիայի վերահսկումը:

Նշվածներից կառավարության արդյունավետությունն ու կոռուպցիայի վերահսկումը ՀՀ-ում ցույց են տվել միջին դրական կոռեկցիա տնտեսական աճի հետ, սակայն այստեղից երևում է, որ Հայաստանը դեռևս կարիք ունի ինստիտուցիոնալ բարեփոխումների՝ ի տարբերություն հարևան երկրների՝ Ադրբեյջանի և Վրաստանի, որոնք ունեն ուժեղ դրական կոռեկցիա, օրինակ՝ կառավարության արդյունավետության և տնտեսական աճի միջև: Դատելով Վրաստանի ինստիտուցիոնալ գործոնների ցույց տված արդյունքներից՝ կարելի է փաստել վերջինիս ինստիտուտների արդյունավետության բարձր մակարդակը:

Մեր կարծիքով՝ թեև ինստիտուցիոնալ գործոնները, որպես ոչ տնտեսական գործոն, ուղղակիորեն չեն ներառվում արտաքին գործոնների դասակարգման մեջ, այնուամենայնիվ, կարևորելով յուրաքանչյուր արտաքին գործոնի դերը երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում, համարում ենք, որ ինստիտուտներն ուղղակիորեն կապված են բոլոր արտաքին գործոնների հետ, քանի որ, ի վերջո, արտաքին գործոնները ածանցվում են բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրից: Ուստի առաջարկում ենք ինստիտուտները դիտարկել որպես տնտեսական աճը պայմանավորող անկախ գործոն: Ըստ այդմ՝ բարենպաստ ինստիտուցիոնալ փոփոխությունների միջոցով կարելի է խթանել ՀՀ տնտեսական աճը և դրա վրա ազդող արտաքին գործոնները:

Այսպիսով՝ տնտեսական աճի էկզոգեն մոդելի գնահատմամբ կարելի է արձանագրել Հայաստանի համար արտաքին գործոնների խթանման անհրաժեշտության հանգամանքը: Չնայած, ըստ մոդելի գնահատման արդյունքների, որոշ ներքին գործոններ ցույց են տվել ուժեղ կոռեկցիաներ ՀՀ տնտեսական աճի հետ, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ տնտեսական աճի խթանման ապահովման համար անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել արտաքին գործոններին:

Օգտագործված գրականություն

1. Գրիգորյան Կ. Հ., ՀՀ արտաքին առևտուրը և վճարային հաշվեկշիռը (դասախոսություն), Եր., «Տնտեսագետ», 2006:
2. Հովհաննիսյան Հ., Հովհաննիսյան Ս., Տնտեսական աճի դերը ՀՀ զարգացման գերակայություններում, Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 4(40), 2015:
3. Տիգրանյան Ի., Կարապետյան Լ., ՀՀ տնտեսական աճի գործոնային վերլուծություն, Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 3(31), 2013:
4. Տիգրանյան Ի., Հովհաննիսյան Հ., Կարդանյան Ք., Ավագյան Գ., ՀՀ տնտեսական աճի վրա ազդող գործոնների վերլուծությունը, «Բանբեր ՀՊՏՀ», 1, 2018:
5. Abel A.B., Bernanke B.S., Croushore D., Macroeconomics - 9th edition, United States, 2014.
6. Acemoglu D., Introduction to economic growth // Journal of economic theory, 147(2), (2012).
7. Acemoglu D., Introduction to modern economic growth: Parts 1-5, Department of Economics, Massachusetts Institute of Technology.
8. Acemoglu D., Johnson S., Robison J.A., Institutions as a Fundamental Cause of Long-Run Growth, Handbook of economic growth, Vol. 1A, 2005.
9. Acemoglu D., Robinson J.A., The Role of Institutions in Growth and Development, Washington D.C. 2008.

10. Acemoglu D., Robinson J.A., *Why Nations Fail: The Origins of Power, Prosperity and Poverty* (1st ed.), New York, 2012.
11. Bernanke B.S., Gurkaynak R.S., *Is Growth Exogenous? Taking Mankiw, Romer, and Weil seriously*, Princeton University, 2001.
12. De Jager, J., *Exogenous and Endogenous Growth*, University of Pretoria ETD, 2004.
13. Hodgson G.M., *The Approach of Institutional Economics* *Journal of Economic Literature*, March, 1998.
14. Krugman P., Obstfeld M., Melitz M., *International Economics: Theory and Policy* - 9th edition, 2012.
15. Miguel Lebre de Freitas, *Exogenous Growth, Economic Growth Models: A Primer/Student's Guide*, 2016.
16. North D.C., *Transaction Costs, Institutions, and Economic Performance*, An International Center for Economic Growth Publication, San Francisco, California, 1992.
17. Ogilive Sh., Carus A.W., *Institutions and Economic Growth in Historical Perspective*, University of Cambridge, United Kingdom Vol. 2, 2014.
18. Shapirov I., *Exogenous Vs Endogenous Growth In The EU's Eap And Central Asian Countries*, *Scientific Annals of Economics and Business*, 63 (SI), 2016.
19. Solow R.M., *A Contribution to the Theory of Economic Growth* // *The Quarterly Journal of Economics*, Vol. 70, No. 1, 1956.
20. Solow R.M., *Toward a Macroeconomics of the Medium Run* // *Journal of Economic Perspectives*, Vol. 14, No. 1, 2000.
21. Ugur M., *Modeling Growth: Exogenous, Endogenous and Schumpeterian growth models*, University of Greenwich Business School, GPERC № 37, 2016.
22. Wiggins S., Davis J., *Economic institutions*. London: Research Programme on Improving Institutions for Pro-Poor Growth, IPPG Briefing, 2006.
23. <https://www.intelligenteconomist.com/economic-growth/>
24. <https://www.investopedia.com/terms/e/exogenous-growth.asp>
25. <https://www.ubs.com/microsites/nobel-perspectives/en/laureates/robert-solow.html>

ЦОВИНАР КАРАПЕТЯН

*Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук*

САСУН МИНАСЯН

Студент 4-го курса бакалавриата факультета "Регулирования экономики и международных экономических отношений" по специальности "Макроэкономическая политика и прогнозирование"

Внешние факторы, влияющие на экономический рост РА. Модель экзогенного роста.– Обеспечение экономического роста является экономической и политической целью для каждой страны. Экономическая система любой страны всегда подвержена внешним и внутренним факторам. Восприятие и знание факторов, которые влияют на экономический рост, и их влияние позволяют нам создавать более устойчивые основы для высоких темпов экономического роста. Параллельно с развитием мировой экономики зависимость нашей страны от внешнего мира возрастает, и важно определить новые источники экономического роста, поэтому становится актуальным выяснить все внешние факторы и импульсы, которые оказывают существенное влияние на экономический рост. Необходимость обеспечения экономического роста за счет стимулирования внешних факторов и расширения их масштабов делает его критически важным для изучения вопросов их воздействия, что подразумевает актуальность данной статьи.

Ключевые слова: *экономический рост, внешний фактор, модель экономического роста, модель роста Солоу, стимулирование экономического роста, модель экзогенного роста, глобальная экономика, внешняя торговля, прямые иностранные инвестиции, институты, институциональные изменения.*

JEL: E6, E50, E60

TSOVINAR KARAPETYAN

*Associate Professor at the Chair of Macroeconomics at ASUE,
PhD in Economics*

SASUN MINASYAN

4th year undergraduate student at the department of Regulation of Economy and International Economic Relations majoring in Macroeconomic Policy and Forecasting at ASUE

External Factors Influencing the Economic Growth of the RA: The Exogenous Growth Model.– Ensuring economic growth is an economic and political goal for each country. The economic system of any country is always exposed to external and internal factors. The perceptions and knowledge on the factors that affect the economic growth and their impacts allow

us to create more resistant bases for high rates of economic growth. In parallel with the development of the global economy, our country's dependence on the outside world is increasing and it is important to identify new sources of economic growth, therefore, it becomes urgent to find out all the external factors and impulses that have a significant impact on economic growth. The need for ensuring economic growth by promoting external factors and expanding their scope makes it crucial for studying the issues of their impact, which implies the relevance of this article.

Key words: *economic growth, external factor, economic growth model, Solow growth model, promoting the economic growth, exogenous growth model, global economy, foreign trade, foreign direct investments, institutions, institutional changes.*

JEL: E6, E50, E60